Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, ԳԽ Նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«31» 08 2020թ.

ԿԱՆՈՆԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԶԵՂՉԵՐԻ) ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույնով սահմանվում է «Ավանդական բժշկության համալսարանի» (այսուհետ՝ Համալսարան) ուսանողների խրախուսման գործընթացի կազմակերպման և Ուսանողների ուսման վճարի մասնակի փոխհատուցման (զեղչերի) տրամադրման կանոններն ու պայմանները:

1.2. Սույն կարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ ԿԳ նախարարի 23.08.2014թ-ի №815 Ա/Ք հրամանը, ՀՀ կառավարության 16.10.2014թ. №1126-Ն որոշումը, ԱԲՀ-ի կանոնադրությունը, սույն կանոնակարգը և կանոնակարգող ներքին իրավական այլ փաստաթղթեր:

1.3. Կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարվում է Համալսարանի գիտական խորհրդի կողմից:

II. ՀԱՎԵԼՅԱԼ ՕԺԱՆԴԱԿՄԱՆ ԵՎ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

2.1. Դեկանատի և Ուսանողական խորհրդի հիմնական գործառույթներից է ուսանողներին օժանդակումը և ուղղորդումը:

2.2. Դեկանատի կողմից ուսանողների օժանդակումը, աջակցումը և ուղղորդումը վերաբերում է կրթական գործընթացին և ուսանողական կյանքին:

2.3. Հավելյալ օժանդակման և խրախուսման մասին որոշումներ կայացնելու ժամանակ հաշվի են առնվում հետևյալ չափորոշիչները, եթե ուսանողը՝

2.3.1. մասնակցել է ուսանողական տարբեր հասարակական միջոցառումներին,

2.3.2. ցուցաբերում է ուսման բարձր առաջադիմություն,

2.3.3. ընդգրկված է կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներին,

2.3.4. մասնակցել է ամբիոնային ուսումնական գործընթացների բարելավմանը,

2.3.5. ակտիվ մասնակցում է Համալսարանում կազմակերպվող գիտագործնական և հետազոտական աշխատանքներին,

2.3.6. նախաձեռնում և մասնակցում է Համալսարանի հասարակական կյանքին և կազմակերպչական գործունեությանը:

III . ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

3.1. Բոլոր ուսանողներին հնարավորություն է տրվում մասանակցելու համալսարանում կազմակերպվող տարբեր միջոցառումներին:

3.2. Հնարավորություն է ընձեռվում ընդգրկվելու կրթական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

3.3. Ուսանողների կողմից իրականացվող ինքնակրթությունն ու գիտահետազոտական գործունեությունը գնահատվում և խրախուսվում է: Այդ նպատակով նրանց տրամադրվում է լաբորատորիաներ, ֆինանսական միջոցներ և այլ օժանդակ հնարավորություններ:

3.4. Համաձայն Համալսարանի ներքին կարգապահական կանոնների պահպանման, ուսանողի պարտականությունների բարեխիղճ կատարման, օրինակելի վարքի դրսևորման, ուսման մեջ բարձր առաջադիմություն ցուցաբերելու, ուսանողական տարբեր գիտական կոնֆերանսներին մասնակցության և այլ ուսանողական ձեռքբերումների համար ուսանողը կարող է խրախուսվել հետևյալ կարգով՝

3.4.1. շնորհակալագրի տրամադրում, կցված անձնական գործերին,

3.4.2. միանվագ դրամական կամ հուշանվերներով պարգևատրում:

IV. ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԶԵՂՉԵՐԻ) ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1 Ուսանողական նպաստը մասնակի փոխհատուցում է ուսանողի ուսման վարձավճարը ԱԲՀ ֆինանսական միջոցների հաշվին:

4.2 Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրվում է՝

4.2.1. 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին,

4.2.2. զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին,

4.2.3. պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին,

4.2.4. միևնույն ընտանիքից համալսարանում սովորող երկու և ավելի ուսանողներին,

4.2.5. 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամ կամ անաշխատունակ ծնողներ ունեցող ուսանողներին,

4.2.6. համալսարանում 7 և ավելի տարի աշխատանքային պայմանագրով անընդմեջ աշխատող աշխատակիցների երեխաներին,

4.2.7. առանձնահատուկ և սույն կանոնակարգով չնախատեսված դեպքերում ռեկտորի որոշմամբ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին՝ ՄՈԳ-ի 95 տոկոս շեմը հաղթահարած ուսանողներին: